ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-2021/2-1-ԵՊԲՀ/1

ք. Երևան «17» 12 2020թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<**Ֆոտոն**>> **ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Ն.**Պետրոսյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրով:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7269450 (յոթ միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

6.4 Պ++այմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային

օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>

Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2

Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ

h/h 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր Ա. Ա. Մուրադյան

_______________________

(ստորագրությունը)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

"Ֆոտոն" ՍՊԸ

Հասցե, ք, Երևան, Ռոստոմի 58

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

h/h 16044050085000

ՀՎՀՀ 90036001

Տնօրեն՝ Նելլի Պետրոսյան

_______________________

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 1*
*«17» 12 2020 թ. կնքված*
*N ԳՀԱՊՁԲ-2021/2-1-ԵՊԲՀ/1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն* | ենթակա քանակը,համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում | Ժամկետը* |
| Բանջարեղեն | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | | | | | |
| 3 | 15311100 | Կարտոֆիլ , Կարտոֆիլ | | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 6%: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 200 | 80000 | 400 | | 400 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գյուղմթերք | | | | | | | | |
| 4 | 03221410 | Կաղամբ , Կաղամբ | Գյուղմթերք | Արտաքին տեսքը` գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: 55% - վաղահաս, 45%- միջահաս: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլնկած:Գլուխների մաքրման աստիճանը` կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի:Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 1 կգ-ից:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 180 | 12600 | 70 | | 70 | |
| 5 | 03221121 | Պոմիդոր, Պոմիդոր | Գյուղմթերք | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, կարմիր, թարմ, ամբողջական, չվնասված: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 450 | 15750 | 35 | | 35 | |
| 6 | 03221124 | Վարունգ, Վարունգ | Գյուղմթերք | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 8-15 սմ, նեղ մասի տրամագիծը` 4-6 սմ, թարմ, ամբողջական, առողջ, չկեղտոտված, առանց մեխանիկական վնասվածքների: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 400 | 14000 | 35 | | 35 | |
| 7 | 15331161 | Սոխ, Սոխ | Գյուղմթերք | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 | կգ | 300 | 21000 | 70 | | 70 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | %-ի տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| 8 | 03221120 | Բիբար, Բիբար | Գյուղմթերք | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը՝ 12 սմ-ից ոչ պակաս, լայն մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, կոնաձև, կարճ պտղակոթով: Առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների, թարմ: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 300 | 3000 | 10 | | 10 | |
| 9 | 15331167 | Համեմ, Համեմ | Գյուղմթերք | Համեմ թարմ, կապով կամ քաշով, առանց փչացած ու չորացած մասերի: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 1600 | 16000 | 10 | | 10 | |
| 10 | 03221122 | Դդմիկ, Դդմիկ | Գյուղմթերք | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 18 սմ-ից ոչ պակաս և ոչ ավելի 23 սմ-ից, նեղ մասի տրամագիծը 6 սմ-ից ոչ ավել, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չթառամած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 300 | 15000 | 50 | | 50 | |
| 11 | 15331165 | Սխտոր, Սխտոր | Գյուղմթերք | Սովորական տեսակի: Ամբողջական, մաքուր, առողջ: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 3000 | 9000 | 3 | | 3 | |
| 12 | 03221110 | Գազար, Գազար | Գյուղմթերք | Թարմ, ամբողջական, չլվացված, առողջ, մաքուր, չվնասված, սովարական տեսակի: Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը առնվազն 10 սմ, տակի հատվածի | կգ | 360 | 18000 | 50 | | 50 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տրամագիծը ոչ պակաս 3 սմ-ից: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| 13 | 03221100 | Բազուկ, Բազուկ | Գյուղմթերք | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 8-12սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 3%: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 300 | 9000 | 30 | | 30 | |
| Հյութեր | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Պատրաստված ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 882 որոշմամբ ընդունված «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | | | | | |
| 14 | 15321000 | Բնական հյութ, Սոչնայա դալինա | *Յուժնայա Սոկովայա Կոմպանիա ՍՊԸ* | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, ծավալային մասը 40%-ից, շաքարի օշարակի հավելումով, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% և ոչ | լ | *200* | *72000* | 360 | | 360 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պարզ՝ 0,8% : Չափածրարված 0,2լ ստվարաթղթե տուփերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| Քաղցրավենիք | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | | | | | | | | | | | |
| 16 | 15821500 | Խաչապուրի, Խաչապուրի | *Նոնա Ամիրյան Ա/Ձ* | Խմորը շերթավոր՝ բաղադրությունը.մարգարին, աղ, լիմոնի աղ, շաքարավազ, ալյուր բ/տ,պանիր,ձու:Քաշը 50 գր, Պիտանելիության ժամկետը արտադրման պահից 1 օր: : Պարտադիր պայման՝ տեղափոխումը միայն ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված համապատասխան թույլտվությամբ տրանսպորտային միջոցներով: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *2000* | *600000* | 300 | | 300 | |
| 19 | 15842110 | Շոկոլադե սալիկ, Շոկոլադե սալիկ | *Գրանդ Քենդի* | Կոնֆետներ շոկոլադե: Պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, ծակոտկեն խոռոչավոր, ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, մանրեցման աստիճանը 92 %, միջուկի զանգվածային մասը՝ 20 %, 90 գ զտաքաշով, անհատական փաթեթավորմամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության | կգ | *4200* | *680400* | 162 | | 162 | |
| 20 | 15821500 | Վաֆլի, Վաֆլի | *Արմավիր* | Վաֆլի միջուկով: Շոկոլադե և կաթնային համերով: 150գ անհատական | կգ | *900* | *243000* | 270 | | 270 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | փաթեթավորմամբ. Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| Մսամթերք | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ ընդունված «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) կանոնակարգի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | | | | | | | | | | | |
| 21 | 15112160 | Հավի բուդ, Հավի բուդ | *Միրոնովսկայա պտիցեֆաբրիկա* | Հավի բուդ, սառեցված, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակներով, սառեցվածը՝ առանց կչռածրարման, պիտանելիության մնացորդային ժամկետը 60%: Պարտադիր պայմաններ՝ տեղափոխումը միայն ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված համապատասխան թույլտվությամբ տրանսպորտային միջոցներով:Պիտանելիության մնացորդային ժամկետը 60%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *1100* | *143000* | 130 | | 130 | |
| 22 | 15112160 | Հավի կրծքամիս, Հավի կրծքամիս | *Seara alimentos LTDA* | Կրծքամիս սառեցված, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փափուկ միս առանց ոսկորի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Պարտադիր պայմաններ՝ տեղափոխումը միայն ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված համապատասխան թույլտվությամբ տրանսպորտային միջոցներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը :Ապրանքը չպետք է լինի | կգ | *1400* | *252000* | 180 | | 180 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թուրքական արտադրության: | | | | | | | |
| Կաթնամթերք | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | | | | | |
| 23 | 15511100 | Կաթ, Կաթ | *Արգնի* | Պաստերացված կովի թարմ կաթ 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 0T: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Չափածրարված 1լ ստվարաթղթե տուփերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 90%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | լ | *600* | *1080000* | 1800 | | 1800 | |
| 24 | 15512000 | Թթվասեր, Թթվասեր | *Արգնի* | Բաղադրությունը՝ կովի թարմ կաթ, չոր յուղազերծ կաթ, սերուցքային կարագ, բակտերիալ մերան: Յուղայնությունը՝ 20 %, թթվայնությունը՝ 65-100 0T, Փաթեթավորված սպառողական 100 գ տարաներով: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը 90%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *2200* | *1452000* | 660 | | 660 | |
| 25 | 15541100 | Պանիր, Պանիր | *Ռոմիկ Կիրակոսյան Ա/Ձ* | Պանիր լոռի, դեղին աղաջրային պանիր, կովի կաթից, 40% յուղայնությամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը 90%: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: | կգ | *3000* | *1500000* | 500 | | 500 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| 27 | 15542110 | Պանրիկ, Պանրիկ | *Մարիաննա* | Պանրիկ ջնարակված , վանիլային շոկոլադե և տարբեր մրգային միջուկներով , բաղադրությունը կաթնաշոռ , կոկոսի յուղ, շաքարավազ,կարագ սերուցքային : Փաթեթավորումը 40 գր սպառողական տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 90 %: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *3000* | *216000* | 72 | | 72 | |
| 28 | 15551600 | Մածուն,Մած ուն | *Արգնի* | Կովի թարմ կաթից, յուղայնությունը 3%, թթվայնությունը 65-1000T: Փաթեթավորված 1 կգ-ոց տարաներով: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 90%:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *600* | *24000* | 40 | | 40 | |
| Ձու | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի, ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշման և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: ՀՏՏ 182-2012 | | | | | | | | | | | |
| 30 | 03142520 | Ձու, Ձու | *Արգնի* | Հավի ձու սեղանի 02-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, ձվի պահման ժամկետը 0 0C-ից մինչև 20 0C ջերմաստիճանում մինչև 25 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը 70 %Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | հատ | *80* | *560000* | 7000 | | 7000 | |
| Համեմունքներ | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա | | | | | | | | | | | |

մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | 15872400 | Աղ կերակրի, Աղ կերակրի | *Մեփիդ Ֆաս Յարագ* | Կերակրի մանր աղ՝ բարձր տեսակի, յոդացված: Պիտանելիության ժամկետը՝ արտադրման օրվանից 12 ամիս: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *180* | *7200* | 40 | | 40 | |
| 32 | 15863200 | Թեյ,Թեյ | Օրիմի | Բայխաթեյ սև չափածրարված և առանց , խոշոր տերևներով , հատիավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները եսակավորված են 2 գ փաթեթներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *8000* | *160000* | 20 | | 20 | |
| 33 | 15871256 | Աղացած պղպեղ սև, Աղացած պղպեղ սև | *Բելա Վիտա* | Սովորական տեսակի: պոլիէթիլենային տոպրակներով: : Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %,Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *4000* | *8000* | 2 | | 2 | |
| 34 | 15871256 | Աղացած պղպեղ կարմիր, Աղացած պղպեղ կարմիր | *Գյուղմթերք* | Աղացած պղպեղ կարմիր քաղցր : Սովորական տեսակի: Պատրաստված կարմիր քաղցր պղպեղից: : Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *1800* | *3600* | 2 | | 2 | |
| 35 | 15872310 | Դափնետերև, Դափնետերև | *Բելա Վիտա* | Չորացրած դափնետերևներ, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 % : Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *4300* | *4300* | 1 | | 1 | |
| 36 | 15872600 | Սոդա, Սոդա | *Բաշկիրսկայա սոդովայա կոմպանիա* | Սննդային, մանր, սպիտակ, սննդում օգտագործվող համային հավելում: : Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 | կգ | *600* | *600* | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | %Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| 37 | 15871230 | Կետչուպ, Կետչուպ | Չումակ | Էքստրա,բարձր,առաջին և երկրորդ կարգերի փաթեթավորումը 1000մլ պոլիմերային տարաներով, գործարային փաթեթավորմամբ, Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 % : Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 1500 | 7500 | 5 | | 5 | |
| 38 | 15871253 | Մայոնեզ, Մայոնեզ | Չումակ | Բարձր կալորիականությամբ 55% ավել յուղ , փաթեթավորումը 1000մլ պոլիմերային տարաներով , գործարային փաթեթավորմամբ. Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 % : Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 1600 | 8000 | 5 | | 5 | |
| Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն | | | | | | | | | | | |
| Ընդեղեն | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | | | | | |
| 39 | 15331176 | Սունկ պահածոհացված, Շամպինոններ ամբողջական | Ջոննարիով ՍՊԸ | Սունկ պահածոյացված, բաղադրությունը՝ սունկ, ջուր, շաքար, աղ, մետաղյա տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը քան 60 %:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 2300 | 11500 | 5 | | 5 | |
| 40 | 15331180 | Պահածոյացված ոլոռ, Պահածոյացված ոլոռ | Ջիգուլի Քաունթրի Քուգու Ֆուդ Քո: ԶԺՀ | Ոլոռ պահածոյացված, բաղադրությունը՝ ոլոռ, ջուր, շաքար, աղ, մետաղյա տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %:Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | 1200 | 6000 | 5 | | 5 | |
| 41 | 15331185 | Եգիպտացորեն պահածո, | Ջիգուլի Քաունթրի Քուգու Ֆուդ Քո: | Եգիպտացորեն պահածոյացված , որն անցել | կգ | 1200 | 6000 | 5 | | 5 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Եգիպտացոր են պահածո | ՉԺՀ | է համապատասխան մշակում, մետաղյա տարաներով, բաղադրությունը` եգիպտացորեն, աղ, ջուր, պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | | | | | | | |
| Ձավարեղեն | | | | | | | | | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ` համապատասխան Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը` դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | | | | | |
| 46 | 15617000 | Ցորենաձավար, Ցորենաձավար | *Գնորդ Մանասերյան* | Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%, աղբային խառնուկները 0,3%, պատրաստված բարձր տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *300* | *3000* | 10 | 10 | | |
| 47 | 15619000 | Հաճար, Հաճար | *Գնորդ Մանասերյան* | Ստացված հաճարի հատիկներից, հատիկների խոնավությունը 15 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %: Ապրանքը չպետք է լինի թուրքական արտադրության: | կգ | *400* | *8000* | 20 | 20 | | |

** Ապրանքների մատակարարումն իրականացվում է 2021 թվականին` համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած` փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի` պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության դրույթները*

**Եթե պայմանագրի գործողության ընթացքում մատակարարումը իրականացվում է ոչ ամբողջական քանակով, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

*Մատակարարման պայմանները.*

** Մատակարարումը իրականացվում է ամեն օր: Ընդ որում, մատակարարումը իրականացվում է մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 07.00-ն:*

** Ապրանքը(ները) մատակարարվում է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա, որտեղ Գնորդի կողմից պետք է հստակ նշված լինի ձեռք բերվող ապրանքի(ների) համառոտ նկարագրությունը, չափման միավորը, քանակը: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից մեկ օր առաջ ժամը 10:00-ից մինչև 11.00-ն): Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով:*

*Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո Վաճառողը, <<Մնողամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում, ըստ անհրաժեշտության:*

*Պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է վերոնշյալ ապրանքի(ների) համար: Ընդ որում, յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փաթեթավորման վրա պետք է մակնշված լինի արտադրող ձեռնարկության անվանումը, արտադրանքի անվանումը, տեսակը, արտադրության ժամկետը, մատակարար ձեռնարկության անվանումը, պահպանման ժամկետը, ապրանքի քաշը, օրենքով սահմանված այլ տեղեկատվություն: Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:*

*Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:*

*Մատակարարումն իրականացվում է Երևան քաղաքում ,Գնորդի կողմից նշված հասցեով:*

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*

ԳՆՈՐԴ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
"Ֆոտոն" ՍՊԸ
Հասցե, ք, Երևան, Ռոստոմի 58
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
հ/հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն՝ Նելլի Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» 12 2020 թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ-2021/2-1-ԵՊԲՀ/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«     »          2020 թ. կնքված*
*N ԳՀԱՊՁԲ-2021/2-1-ԵՊԲՀ/1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ________________________ | հհ________________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝    __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «     » 20    թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    »    2020 թ. կնքված*
*N ԳՀԱՊՁԲ-2021/2-1-ԵՊԲՀ/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ  N ________
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________________
Գնորդի անվանումը Վաճառողի
անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն
______________________________
Ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն